

ու բացուած վանքին ներքին մէկ բակին վրայ: Խիստ խոշոր քարերու կոյտեր կ'իշխեն հիւսիսային պատին երկայնքին, երկու բացուած քներու միջև, և գրեթէ հարաւային պատին ամբողջութեան վրայ: Արեւելքի և արեւմուտքի պատերը, հաստատուն՝ բայց մաշածոյ կառուցուածքով մը, ուղղահայեացօրէն կը բարձրանան մինչև 1մ., 58: 2մ. 372 շառաւիղով կիսաբոլոր կամար մը, հիւսիսէն-հարաւ երկարածիւր ատանցքով կը ծակէ ծածկելու համար մատուռին մակերեսը, և կեդրոնէն մինչև վեր կ'ունենայ 3., 95 բարձրութիւն: Կամարին մէջ շինուած կարգ մը ուղղանկիւն բացուածքներ կ'ապահովեն ստորերկրեայ սեղանին օգտւորումը: Այժմ անոնք փակուած են և պեղումները տակաւին թոյլ չեն տար մեզ ստուգապէս գիտնալ թէ ինչ տեսակ շէնքեր երբեմն կը բարձրանային մեռելամատարան վրայ, որոնցմէ այսօր միայն կոշտ փլատակներ գոյութիւն ունին: Արեւելեան պատին կեդրոնը և անոր յենած կը տեսնուի որմախարիսխը փոքր սեղանի մը: Սեղանին երկու կողմերը պատին մէջ շինուած են երկու որմախորշեր որրանաձեւ կամարին սկսուածքին վրայ, անոնց սահմանումը տարակուսական չէ. ասոնք մեռելամատարան խորհրդանշոց և սարկուազատունն են: Այս վերջնոյն ետեւ անյաջող կերպով շարուած կոշտ քարերը ցոյց կու տային խոռոչ մը՝ որուն հետազօտութեամբը դանդաղեցաւ պատով հիւսուած մասնաւորի մը գերեզմանը: Նման բան մը կարելի էր ենթադրել նաեւ խորհրդանոցին ետեւ, եւ իրաւ ալ գուշակութիւնը իրականացաւ, կրկնակ գերեզմանի դիմաց կը տեսնուէր նեղ նրբանցք մը: Ուրիշ գերեզմաններ դասաւորուած էին նոյն իսկ ստորերկրեայ հողին մէջ. նեղ և երկայն փոս մ'էր ան, համաձայն մատրան առանցքին: Նոյն գերեզմանը թափուր էր՝ երբ գտնուեցաւ: Հողերը մեծ սալաքարերով պաշտպանուած էին, բացի արեւելքէն, ուր ցիխի շաղախով շինուած քարէ միջնորմ մը այս փոսը կը բաժնէր աւելի լայն և աւելի խոր ուղղանկիւն խոռոչէ մը որ կը տարածուէր սեղանին առջև մինչև դէպի հարաւ: Այս խոռոչը կը պարունակէր ամեն տեսակ նիւթեր, չորցած ոսկորներ և թրծուն փոքր կանթեղներ: Հիւսիսային պատին անսովոր հնչականութիւնը կասկածիլ կու տար մերձակայ քանի մը գերեզմաններու գոյութեան. դէպքը հաստատեց այս ենթադրութիւնը, եւ բարակ միջնորմը փլցնելէ յետոյ երեւան